ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2022 թվականի N 224-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 6-ի N 450-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 7.1.1 կետի՝ **որոշում եմ.**

1. 2022 թվականի հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն՝ «Դաշտավայրերում, արոտավայրերում առաջացած խոշոր հրդեհների հրդեհաշիջման կազմակերպումը և իրականացումը» թեմայով:

2. Նշանակել՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ) պետ, փրկարար ծառայության մայոր՝ Գ. Սեդրակյանին:

3. Հաստատել՝

1) 2022 թվականի հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության կազմակերպման և անցկացման նպատակով՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) 2022 թվականի հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության ղեկավարման կազմակերպման սխեման՝ համաձայն N 2 հավելվածի,

3) 2022 թվականի հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) 2022 թվականի հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության մտահղացման սխեման՝ համաձայն N 4 հավելվածի,

5) 2022 թվականի հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության մտահղացման բացատրագիրը՝ համաձայն N 5 հավելվածի,

6) 2022 թվականի հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն N 6 հավելվածի,

7) 2022 թվականի հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության իրավիճակի զարգացման պլանը՝ համաձայն N 7 հավելվածի:

4. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովին,

2) Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ծառայողներին,

3) «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրեն՝ Հ. Աբրահամյանին,

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի հետևյալ վարչություններին և բաժիններին՝

ա. առողջապահության և սոցիալական ապահովության վարչության խորհրդական՝ Մ. Բալյանին,

բ. քաղաքաշինության վարչության պետ՝ Հ. Վարդանյանին,

գ. ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար՝ Մ. Պետրոսյանին,

դ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մ. Եղիազարյանին,

ե. տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ՝ Ի. Հայրիյանին:

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավար՝ Ն. Հարությունյանին,

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական ղեկավար՝ Վ. Հովհաննիսյանին:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության մայոր՝ Գ. Սեդրակյանին.

1) ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2022 թվականի հուլիսի 15-ը ներառյալ ներկայացնել հաստատման՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի (N 3 հավելված),

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց, ներգրավված ուժերի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի (N 3 հավելված),

3) ապահովել համագործակցությունը ուսումնավարժության մասնակիցների հետ,

4) կազմակերպել համապատասխան իրավական ակտերի ուսումնասիրությունները,

5) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2022 թվականի հուլիսի 18-ին:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ուսումնասիրել թեմային առնչվող համապատասխան իրավական ակտերը,

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Սույն որոշման մասին իրազեկել ըստ առնչության:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ Վ. Վարդանյանին:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2022 թվականի հուլիսի 12
ք. Հրազդան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի հուլիսի 12-ի N 224-Ա որոշման

ԿԱԶՄ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

1. Գ. Սեդրակյան - Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ:

2. Կ. Մաղաքյան - Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ պետի տեղակալ՝ ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի ղեկավարի տեղակալ:

3. Ա. Գյուրջինյան - Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ՝ ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի անդամ:

4. Ա. Ճաղարյան - Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի պետ՝ ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի անդամ:

5. Գ. Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ՝ ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի անդամ:

6. Ն. Ասրյան - Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ՝ ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի անդամ:

7. Ա. Սիմոնյան - Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ՝ ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի անդամ:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի հուլիսի 12-ի N 224-Ա որոշման

ՍԽԵՄԱ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ



Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի հուլիսի 12-ի N 224-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ՀՀ ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու, կատարողներ	Նշումներ
1	2	3	4	5
Փաստաթղթերի մշակում				
1.	Ելակետային տվյալների որոշում՝ անցկացման վայր, մտահղացում, անցկացման կարգ	Մինչև 15.07.2022թ.	Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբի պետ	
2.	Շտաբային ուսումնավարժության մտահղացում (սխեմայի տեսքով)	Մինչև 15.07.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
3.	Շտաբային ուսումնավարժության մտահղացման բացատրագրի մշակում	Մինչև 15.07.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
4.	Շտաբային ուսումնավարժության անցկացման պլանի մշակում	Մինչև 15.07.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
5.	Շտաբային ուսումնավարժության իրավիճակի զարգացման պլանի մշակում	Մինչև 15.07.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
6.	Շտաբային ուսումնավարժության ղեկավարման կազմակերպման սխեմայի մշակում	Մինչև 15.07.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
7.	Շտաբային ուսումնավարժության փաստաթղթերի հաստատման ներկայացում	Մինչև 15.07.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
Ուսուցանվողների նախապատրաստումը				
8.	Մասնակիցներին շտաբային ուսումնավարժության կազմակերպման և անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում, թեմային առնչվող համապատասխան իրավական ակտերի ուսումնասիրում	Մինչև 19.07.2022թ.	Ղեկավարման շտաբի պետի տեղակալ	
Ուսումնամեթոդական բազայի նախապատրաստում				
9.	Գրենական պիտույքների ապահովում	Մինչև 20.07.2022թ.	Ղեկավարման շտաբի պետի տեղակալ	

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի հուլիսի 12-ի N 224-Ա որոշման

ՍԽԵՄԱ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ



Պայմանական նշաններ

- բնակելի տուն

- երկաթբետոնե կամուրջ

- հրդեհների գոտի և դրանց տարածման ուղղությունը

- ռեստորանահյուրանոցային համալիր

- հրդեհաշիջման գործողությունների վճռական ուղղությունները

- հրդեհաշիջման ղեկավարի շարժական կառավարման կետ

- ուժերի և միջոցների շարժման ուղղություն

- ափամերձ տարածքի հատված, որտեղից հնարավոր է ջրի լիցքավորում հրշեջ մեքենայի պոմպով

Հավելված N 5
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի հուլիսի 12-ի N 224-Ա որոշման

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ

Թեման՝ *«Դաշտավայրերում, արոտավայրերում առաջացած խոշոր հրդեհների հրդեհաշիջման կազմակերպումը և իրականացումը»*:

Նպատակները՝

ա) Ստուգել և կատարելագործել մասնակիցների ունակությունները՝ Կոտայքի մարզի տարածքում խոշոր դաշտային հրդեհների դեպքում, հրդեհաշիջման կազմակերպման և իրականացման գործում,

բ) կատարելագործել կառավարման մարմինների և ուժերի ղեկավար կազմի միջև փոխհամագործակցությունը, գործողությունների ներդաշնակությունը:

Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության, քաղաքաշինության, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման, գյուղատնտեսության և բնապահպանության վարչություններ, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական ղեկավար:

Անցկացման ժամանակը՝ 2022 թվականի հուլիսի 20-ին ժամը 08:30-ից 16:00-ն:

Անցկացման վայրը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի վարչական շենքի նիստերի դահլիճ (հասցե՝ ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս):

Ելակետային տվյալները.

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500մ բարձրության վրա, տարածքը կազմում է 2076կմ^2: Մարզկենտրոնը Հրազդան քաղաքն է: Մարզի բնակչությունը կազմում է 320353 մարդ: Համայնքների թիվը՝ 11, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 4: Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին: Մարզի տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գութանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին: Կոտայքի

սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Մարզի տարածքով են անցնում Երևան-Շորժա և Հրազդան-Իջևան երկաթուղիները, իսկ մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք ընդամենը 45կմ է:

Կոտայքի մարզն աչքի է ընկնում ներքին ջրերի առատությամբ: Գետերից Հրազդանը, Գետառը, Ազատը ունեն ոռոգիչ նշանակություն: Ակնա լճի (բարձրությունը՝ 3032 մետր) ջրերով ջրարմիացվում են ամառային արոտավայրերը: Հրաբխային ապարների մեջ ներծծված ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ազատ գետերի կիրճերում: Հայտնի են Քառասունակնի, Գառնիի և Արզնու աղբյուրները, որոնց ջրերը հասնում են Երևանին և օգտագործվում կենցաղային և արդյունագործածական նկատառումներով:

Կոտայքի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերի տարածքներում կան տասնյակ լճեր, որոնց մի մասը չորանում է ամռանը: Կոտայքի մարզի լճերը տնտեսական նշանակություն գրեթե չունեն: Դրանք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակներով և ունեն տեղական նշանակություն: Մարզի ջրամբարներն գտագործվում են ոռոգման, էներգետիկայի, ձկնաբուծական և բուժական նկատառումներով: Հայտնի են Մարմարիկի և Աղբյուրակի ջրամբարները:

Կոտայքի մարզը սակավ անտառածածկ վարչատարածքային միավոր է, իսկ բուսական աշխարհը նման է Հայաստանի մյուս շրջաններին: Կոտայքի մարզի բուսականության հիմնական տիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ:

Այստեղ աճում է հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն: Կոտայքի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին,. վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:

Կլիման ըստ բարձրության փոխվում է տաք չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10°C-ից մինչև 2.5°C:

Տարվա ամենատաք ամիսը հուլիսն է, իսկ ամենացուրտը՝ հունվարը: Կոտայքի մարզի ցածրադիր շրջաններում միջին հունվարյան ջերմաստիճանը կազմում է 4.5-5°C: Բարձրադիր շրջաններում հունվարյան ջերմաստիճանը նվազում է մեկ և ավելի ջերմաստիճանով՝ -3.6°C:

Համայնքների խոշորոցման ծրագրի շրջանակներում Մարմարիկ գյուղը ընդգրկված է Ծաղկաձոր համայնքի կազմի մեջ:

Ծաղկաձոր համայնքի Մարմարիկ գյուղը գտնվում է Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև, Մարմարիկ գետի հովտում, Հրազդանից 12կմ հյուսիս-արևմուտք: Զբաղեցնում է 3144հա տարածք: Բնակչության թիվը 757: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի, կաղամբի, մշակությամբ: Բնակավայրի

հարավ-արևելյան հատվածով՝ անմիջապես բնակելի հատվածից սկսած տարածվում է դաշտավայրը, որը զբաղեցնում է մոտ 40հա տարածք:

Գյուղի արևմտյան կողմով անմիջապես սկսվում է անտառածածկ հատվածը, որը հարավ-արևմտյան կողմով հասնում է Ծաղկաձորի անտառին, իսկ հյուսիս-արևմտյան կողմով ձգվում է դեպի Մեղրաձոր և Արագածոտնի մարզ:

Ստեղծված իրավիճակը.

Ըստ հիդրոօդերևութաբանական ծառայությունից ստացված տվյալների առաջիկա 1 ամսվա ընթացքում հանրապետության ողջ տարածքում պահպանվելու է նորմայից բարձր ջերմաստիճան, որը կարող է խոշոր հրդեհների առաջացման պատճառ հանդիսանալ: 2022 թվականի հուլիսի 20-ին ժամը 13:00-ի սահմաններում Կոտայքի մարզի որոշ համայնքների չոր խոտածածկ տարածքներում արձանագրվել են դաշտային հրդեհների դեպքեր, որոնք մեծ վնաս են պատճառել գյուղատնտեսությանը:

Ստեղծված իրավիճակի վերլուծումը հանգեցնում է այն եզրահանգմանը, որ մարզի տարածքում մեծ է դաշտային խոշոր հրդեհների առաջացման և տարածման հավանականությունը:

Հրազդան քաղաքից 15կմ հյուսիս-արևմուտքում՝ Մարմարիկ գետի միջին հոսանքի աջափնյակում գտնվող Մարմարիկ գյուղի դաշտավայրերում նույնպես խոշոր հրդեհ է բռնկվել:

I Փուլ - .«Մասնակիցների ազդարարում, հավաք, խնդրադրում և իրավիճակի գնահատում»:

Փուլի տևողությունը՝

Ապրղաբաշխական ժամանակով՝ 20.07.2022թ.-ին ժամը 10:00-ից 13:00:

Օպերատիվ ժամանակով՝ 20.07.2022թ-.ին ժամը 13:00-ից մինչև հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների ավարտը:

Մասնակի իրավիճակը.

2022 թվականի հուլիսի 20-ին ժամը 13:00-ի սահմաններում, Հրազդան քաղաքից 15կմ հյուսիս-արևմուտքում՝ Մարմարիկ գետի միջին հոսանքի աջափնյակում գտնվող Մարմարիկ գյուղի դաշտավայրերում, անհայտ պատճառներով, մոտ 25հա մակերեսով հրդեհ է բռնկվել: Հրդեհի ծավալները մեծանալով տարածվում է հյուսիս-արևմտյան կողմում գտնվող բնակելի հատված և անտառածածկ տարածք, իսկ հարավային կողմով դեպի անտառածածկ տարածք, որը շարունակվում է դեպի Ծաղկաձորի անտառ: Բնակչության շրջանում առկա է խուճապային իրավիճակ:

Ուսումնական հարցերը՝

1) Մասնակիցների ազդարարում, հավաք, խնդրադրում:

2) Հետախուզության իրականացում, իրավիճակի գնահատում և բնակչության իրազեկման/ազդարարման կազմակերպում, իրականացում:

3) Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպում:

Ուսուցանվողների գործողությունները՝

Ժամը 08:30-ին ուսումնավարժության ղեկավարի կողմից՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին տրվում է կարգադրություն մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովին և համապատասխան ծառայությունների/կազմակերպությունների, ուժերի ղեկավար կազմերի, համապատասխան համայնքների ղեկավարների ազդարարման կազմակերպման վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի կողմից իրականացվում է մարզի ղեկավար կազմի, արտակարգ իրավիճակների հանձնաժողովին և համապատասխան ծառայությունների/կազմակերպությունների, ուժերի ղեկավար կազմերի, համապատասխան համայնքների ղեկավարների ազդարարումը:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտորնի օպերատիվ հերթապահ հերթափոխերի հերթապահի կողմից: Օպերատիվ հերթապահը, ահազանգ ստանալուն պես, ստեղծված իրավիճակից ելնելով, կատարվածի մասին զեկուցում է Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի հերթապահին, ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ պետին, վերջինս էլ զեկուցում է ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին: Զուգահեռաբար իրականացվում է արձագանքում՝ համապատասխան հրշեջ փրկարարական ջոկատների կողմից: Մարզպետից ստանալով համապատասխան կարգադրություն՝ իրականացվում է մարզի ղեկավար կազմի, արտակարգ իրավիճակների հանձնաժողովին և համապատասխան ծառայությունների/կազմակերպությունների ու ուժերի ղեկավար կազմի, համապատասխան համայնքների ղեկավարների ազդարարում:

Ուսումնավարժության մասնակիցները ստանալով հավաքի ազդանշան ներկայանում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան՝ խնդրադրման:

ժամը 10:00-ին ուսումնավարժության ղեկավարը ընդունում է ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետի զեկույցը խորհրդակցությանը պատրաստ լինելու վերաբերյալ: Ուսումնավարժության ղեկավարը (կամ շտաբի պետը) մասնակիցներին ներկայացնում է ստեղծված իրավիճակը:

Ուսումնավարժության ղեկավարը խնդիր է դնում մասնակիցներին՝ դաշտային խոշոր հրդեհների դեպքում իրավիճակի բացահայտման, հրդեհաշիջման, բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:

Տալիս է կարգադրություն՝ համապատասխան պլանները գործողության մեջ դնելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում համապատասխան համայնքների ղեկավարներին՝ բնակչության ազդարարումը էլեկտրաշչակների օգնությամբ կամ այլ պարզագույն մեթոդներով իրականացնելու վերաբերյալ:

Համաձայն ստեղծված իրավիճակի՝ ըստ գործունեության ոլորտների, մասնակիցները առաջարկություններ են ներկայացնում հետախուզության իրականացման, գյուղի և հարևան բնակավայրերի բնակչությանը ստեղծված իրավիճակի և վարվելակերպի կանոնների մասին իրազեկելու, հրդեհաշիջման, բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների կազմակերպման վերաբերյալ:

Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը առաջարկում է Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական ղեկավարին՝ հրդեհի տարածումը դեպի բնակավայր, հարևան դաշտավայրեր, անտառային հատված կանխելու նպատակով աշխատանքներում ընդգրկել նաև բնակավայրի կամավոր հրշեջ խմբերին:

Այնուհետև ուսումնավարժության ղեկավարը խնդիր է դնում մասնակիցներին՝ դաշտային խոշոր հրդեհների դեպքում հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:

Մասնակիցների կողմից հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպման համար իրականացվում են՝

- Ճշտում են հրդեհի մակերեսը և անհրաժեշտ ուժերն ու միջոցները,

- համապատասխան աշխատանքների, միջոցառումների (հրդեհաշիջման, բնակչության իրազեկման/ազդարարման և այլ) իրականացման համար ստեղծում են աշխատանքային խմբեր,

- իրականացնում են՝ բնակչության իրազեկման/ազդարարման, վարվելակերպի կանոնների վերաբերյալ միջոցառումներ և կազմակերպում հրդեհաշիջման միջոցառումներ ձեռնարկելու, ինչպես նաև հրշեջ-փրկարարների դիմավորման և ուղեկցման գործընթացը:

Որոշում են՝

- աշխատանքների կատարման կարգը և հաջորդականությունը.

- ինժեներական տեխնիկայի օգտագործման կարգը՝ աշխատանքներն իրականացնելու ընթացքում,

- համաձայնեցնում են աշխատանքի կատարման ժամանակի, ներգրավված ուժերի և կազմավորումների գործողությունները,

- որոշում են կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրամանատարների միջև:

Միջոցներ են ձեռնարկում տուժած բնակչությանը առաջին օգնություն ցուցաբերելու և բժշկական հիմնարկներ տեղափոխելու ուղղությամբ:

Կատարված աշխատանքների վերաբերյալ, ըստ ոլորտների, ներկայացնում են համապատասխան զեկույցներ: ՈՒսումնավարժության ղեկավարը ունկնդրում է զեկույցները՝ ստեղծված իրավիճակում կազմակերպված և իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:

Ժամը 12:40-ից 13:00 ուսումնավարժության առաջին փուլի արդյունքների ամփոփում:

Ժամը 13:00-ից 13:30-ն ընդմիջում:

II Փուլ - «Հրդեհաշիջման, բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում և որոշումների ձևակերպում»:

Փուլի տևողությունը՝

Ամբողջաշխատանքային ժամանակով՝ 20.07.2022թ.-ին ժամը 13:30-ից 16:00:

Օպերատիվ ժամանակով՝ 20.07.2022թ.-ին ժամը 13:00-ից մինչև աշխատանքների ավարտը:

Մասնակի իրավիճակը.

Հրդեհի հետևանքով ծխապատման գոտում են հայտնվել դաշտավայրում աշխատող 20 մարդ, 2 գյուղատնտեսական տեխնիկա, ինչպես նաև խոշոր և մանր եղջերավոր կենդանիներ: Հրդեհի ծավալները մեծանալով ընդգրկել է մոտ 25հա տարածք, տարածվելով դեպի հյուսիս-արևմտյան կողմ հասել է բնակելի և անտառածածկ հատվածներին: Այրվում են անտառի եզրային ծառերը: Հարավային կողմով հրդեհը տարածվելով հասել է անտառածածկ տարածքի եզրին, որը շարունակվում է դեպի Ծաղկաձորի անտառ:

Հրդեհաշիջման իրականացման համար չեն բավականացնում ուժերն ու միջոցները:

Բնակչության շրջանում տիրում է խուճապային իրավիճակ, ծխապատված է գյուղի հարավային կողմի մի մասը:

Ուսումնական հարցերը՝

1) Հրդեհաշիջման և բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացում:

2) Հրդեհավտանգ գոտուց բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքների տեղափոխման կազմակերպում, իրականացում:

Ուսուցանվողների գործողությունները.

ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետը ներկայացնում է երկրորդ փուլում ստեղծված իրավիճակը:

ՈՒսումնավարժության ղեկավարը խնդիր է դնում մասնակիցներին՝ ըստ ոլորտների կազմակերպել և իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ հրդեհաշիջման, բնակչության պաշտպանության և այլ աշխատանքներ:

Կոտայքի մարզային փրկարարական վարչության կողմից դեպքի վայր ուղարկված Հրազդանի թիվ 44 հրշեջ փրկարարական ջոկատի 2 և Չարենցավանի թիվ 47 հրշեջ փրկարարական ջոկատի 1 մարտական հաշվարկները իրականացնում են հրդեհաշիջման,

վտանգավոր գոտում գտնվող բնակչությանը և կենդանիներին անվտանգ տարածքներ տեղափոխման աշխատանքներ, որոնց ընդգրկված են նաև Մեղրաձոր համայնքի կամավոր հրշեջ խմբերը:

Համայնքի ղեկավար կազմի կողմից ներկայացվում են առաջարկություններ հրդեհավտանգ գոտում գտնվող բնակչությանը և կենդանիներին անվտանգ տարածքներ տեղափոխելու վերաբերյալ: Այդ աշխատանքներում ընդգրկելով Մեղրաձոր համայնքի կամավոր հրշեջ խմբերը:

Մասնակիցները ներկայացնում են առաջարկություններ՝ հրդեհաշիջման, բնակչության պաշտպանության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքների պաշտպանության միջոցառումների իրականացման, անհրաժեշտության դեպքում բժշկական օգնության կազմակերպման վերաբերյալ: Այնուհետև զեկուցում են կատարված աշխատանքների մասին:

Ժամը 15:40-ից 15:50 ուսումնավարժության երկրորդ փուլի արդյունքների ամփոփում:

Ժամը 15:50-ից 16:00 ուսումնավարժության արդյունքների հակիրճ ամփոփում:

Ժամը 16:00-ին հայտարարվում է ուսումնավարժության ավարտ:

Հավելված N 6
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի հուլիսի 12-ի N 224-Ա որոշման

ՊԼԱՆ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Թեման՝ *«Դաշտավայրերում, արոտավայրերում առաջացած խոշոր հրդեհների հրդեհաշիջման կազմակերպումը և իրականացումը»*:

Նպատակները՝

ա) Ստուգել և կատարելագործել մասնակիցների ունակությունները՝ Կոտայքի մարզի տարածքում խոշոր դաշտային հրդեհների դեպքում, հրդեհաշիջման կազմակերպման և իրականացման գործում,

բ) կատարելագործել կառավարման մարմինների և ուժերի ղեկավար կազմի միջև փոխհամագործակցությունը, գործողությունների ներդաշնակությունը:

Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության, քաղաքաշինության, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման, գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունները, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական ղեկավար:

Անցկացման ժամանակը՝ 20.07.2022 թվական, ժամը 08:30-ից մինչև ժամը 16:00:

Անցկացման վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի նիստերի դահլիճ (հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս):

Ուսումնավարժության անցկացման կարգը.

Ժամանակը		Ուսումնական հարցերը	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
օպերատիվ	**աստղա-բաշխական**		**Ղեկավարի**	**Ուսուցանվողների**
1	**2**	**3**	**4**	**5**
I Փուլ - «Մասնակիցների ազդարարում, հավաք, խնդրադրում և իրավիճակի գնահատում»: ***Տևողությունը՝*** *- <u>աստղաբաշխական ժամանակով</u>՝ 20.07.2022թ., ժամը 09:00-ից - 13:00-ն:* *- <u>օպերատիվ ժամանակով</u>՝ ժամը 13:00-ից մինչև հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների ավարտը,*				
	Ժամը 08:30-10:00	Մասնակիցների ազդարարում, հավաք, խնդրադրում	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետին տալիս է հրահանգ ուսումնավարժության մասնակիցների ազդարարման և հավաքի վերաբերյալ: Հսկում է ազդարարման և հավաքի ընթացքը: Ընդունում է զեկույց խորհրդակցությանը պատրաստ լինելու վերաբերյալ: Ունկնդրում է ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետի զեկույցը ստեղծված իրավիճակի վերաբերյալ:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետը ստանալով ահազանգը՝ իրավիճակի մասին զեկուցում է ուսումնավարժության ղեկավարին և ստանում հրահանգ ազդարարման վերաբերյալ: Մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնը, մարզային փրկարարական վարչության պետից ստանալով հրաման՝ իրականացնում է մասնակիցների ազդարարում: Ուսումնավարժության մասնակիցները ստանալով հավաքի ազդանշան ներկայանում են ՀՀ Կոտայքի մարզպետարանի նիստերի դահլիճ՝ խնդրադրման: Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետը ներկայացնում է ստեղծված իրավիճակը:
	Ժամը 10:00-10:30	Հետախուզության իրականացում, իրավիճակի գնահատում և բնակչության իրազեկման/ազդարարման կազմակերպում, իրականացում	Խնդիր է դնում մասնակիցներին՝ դաշտային խոշոր հրդեհների դեպքում իրավիճակի բացահայտման, հրդեհաշիջման, բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքերի պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ: Տալիս է կարգադրություն համայնքների ղեկավարներին՝	Համաձայն ստեղծված իրավիճակի՝ ըստ գործունեության ոլորտների, մասնակիցները առաջարկություններ են ներկայացնում հետախուզության իրականացման, գյուղի և հարևան բնակավայրերի բնակչությանը ստեղծված իրավիճակի և վարվելակերպի կանոնների մասին իրազեկելու, հրդեհաշիջման, բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքերի պաշտպանության միջոցառումների կազմակերպման վերաբերյալ: Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը առաջարկում է Մեղրաձոր բնակավայրի վարչական ղեկավարին՝ հրդեհի տարածումը դեպի բնակավայր, հարևան

			անհրաժեշտության դեպքում բնակչության ազդարարումը էլեկտրաշչակների օգնությամբ կամ այլ պարզագույն մեթոդներով իրականացնելու վերաբերյալ: Ունկնդրում է զեկույցը՝ ստեղծված իրավիճակում կազմակերպված աշխատանքների վերաբերյալ:	դաշտավայրեր, անտառային հատված կանխելու նպատակով աշխատանքներում ընդգրկել նաև համայնքի կամավոր հրշեջ խմբերին:
	Ժամը 10:30-11:30	Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպում:	Խնդիր է դնում մասնակիցներին՝ դաշտային խոշոր հրդեհների դեպքում հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: Ունկնդրում է զեկույցը՝ ստեղծված իրավիճակում կազմակերպված և իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:	- Ճշտում են հրդեհի մակերեսը և անհրաժեշտ ուժերն ու միջոցները, - համապատասխան աշխատանքների, միջոցառումների (հրդեհաշիջման, բնակչության իրազեկման/ազդարարման և այլ) իրականացման համար ստեղծում են աշխատանքային խմբեր, - իրականացնում են՝ բնակչության իրազեկման/ազդարարման, վարվելակերպի կանոնների վերաբերյալ միջոցառումներ և կազմակերպում հրդեհաշիջման միջոցառումներ ձեռնարկելու, ինչպես նաև հրշեջ-փրկարարների դիմավորման և ուղեկցման գործընթացը: Որոշում են՝ - աշխատանքների կատարման կարգը և հաջորդականությունը. - ինժեներական տեխնիկայի օգտագործման կարգը՝ աշխատանքներն իրականացնելու ընթացքում, - համաձայնեցնում են աշխատանքի կատարման ժամանակի, ներգրավված ուժերի և կազմավորումների գործողությունները, - որոշում են կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրա-մանատարների միջև: Միջոցներ են ձեռնարկում տուժած բնակչությանը առաջին օգնություն ցուցաբերելու և բժշկական հիմնարկներ տեղափոխելու ուղղությամբ: Ըստ ոլորտների, ներկայացնում են համապատասխան զեկույցներ՝ ստեղծված իրավիճակում կազմակերպված և

				իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:
	Ժամը 11:30-12:30	Տրվում են թիվ 1 և թիվ 2 միջանկյալները	Ունկնդրում է ուսուցանվողների առաջարկություններն ու զեկույցները	Իրականացնում են միջոցառումներ համաձայն միջանկյալների
	Ժամը 12:30-13:00	Առաջին փուլի ամփոփում	Ունկնդրում է ուսուցանվողների զեկույցները: Իրականացնում է առաջին փուլի ամփոփումը	Մասնակիցները զեկուցում են առաջին փուլում կատարած աշխատանքների մասին
	Ժամը 13:00-13:30	Ընդմիջում		
II Փուլ - «Հրդեհաշիջման, բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքերի պաշտպանության միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում և որոշումների ձևակերպում»: ***Տևողությունը՝*** *- <u>ասուլաբաշխական ժամանակով</u>՝ 20.07.2022թ., ժամը 13:30-ից 16:00-ն:* *- <u>օպերատիվ ժամանակով</u>՝ ժամը 13:00-ից մինչև աշխատանքների ավարտը:*				
	Ժամը 13:30-14:00	Հրդեհաշիջման և բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացում	Խնդիր է դնում մասնակիցներին՝ ըստ ոլորտների կազմակերպել և իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ հրդեհաշիջման, բնակչության պաշտպանության և այլ աշխատանքներ:	ՈՒսումնավարժության ղեկավարը խնդիր է դնում մասնակիցներին՝ ըստ ոլորտների կազմակերպել և իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ հրդեհաշիջման, բնակչության պաշտպանության և այլ աշխատանքներ: Կոտայքի մարզային փրկարարական վարչության կողմից դեպքի վայր ուղարկված Հրազդանի թիվ 44 հրշեջ փրկարարական ջոկատի 2 և Չարենցավանի թիվ 47 հրշեջ փրկարարական ջոկատի 1 մարտական հաշվարկները իրականացնում են հրդեհաշիջման, վտանգավոր գոտում գտնվող բնակչությանը և կենդանիներին անվտանգ տարածքներ տեղափոխման աշխատանքներ, որոնց ընդգրկված են նաև Մեղրաձոր բնակավայրի կամավոր հրշեջ խմբերը:
	Ժամը 14:00-15:00	Հրդեհավտանգ գոտուց բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքերի տեղափոխման կազմակերպում,	Խնդիր է դնում մասնակիցներին՝ վտանգավոր գոտուց բնակչության ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքերի տարահան-ման կազմակերպման վերաբերյալ:	Համայնքի ղեկավար կազմի կողմից ներկայացվում են առաջարկություններ հրդեհավտանգ գոտում գտնվող բնակչությանը և կենդանիներին անվտանգ տարածքներ տեղափոխելու վերաբերյալ: Այդ աշխատանքներում ընդգրկելով Մեղրաձոր բնակավայրի կամավոր հրշեջ խմբերը: Մասնակիցները ներկայացնում են առաջարկություններ՝ հրդեհաշիջման, բնակչության պաշտպանության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքերի պաշտպանության

		իրականացում:		միջոցառումների իրականացման, անհրաժեշտության դեպքում բժշկական օգնության կազմակերպման վերաբերյալ: Այնուհետև զեկուցում են կատարված աշխատանքների մասին:
	Ժամը 15:00-15:40	Տրվում են թիվ 3, թիվ 4 և թիվ 5 միջանկյալները	Ունկնդրում է ուսուցանվողների առաջարկություններն ու պատասխանները	Իրականացնում են միջոցառումներ համաձայն միջանկյալների
	Ժամը 15:40-15:50	Երկրորդ փուլի ամփոփում	Ունկնդրում է ուսուցանվողների զեկույցները: Իրականացնում է երկրորդ փուլի ամփոփումը	Մասնակիցները զեկուցում են երկրորդ փուլում կատարած աշխատանքների մասին
	Ժամը 15:50-16:00	Ուսումնավարժության արդյունքների հակիրճ ամփոփում	Անցկացնում է ուսումնավարժության արդյունքների հակիրճ ամփոփում, մատնանշում ուժեղ և թույլ կողմերը ու տալիս գնահատական	Զեկուցում են ուսումնավարժության ընթացքում կատարած աշխատանքների մասին:
	Ժամը 16:00	Ուսումնավարժության ավարտ	Հայտարարում է ուսումնավարժության ավարտ	

Հավելված N 7
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի հուլիսի 12-ի N 224-Ա որոշման

ՊԼԱՆ
ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ

ԹԵՄԱՆ՝ «Խոշոր դաշտային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում և իրականացում»:

Միջանկյալների տրման ժամը	Միջանկյալների բովանդակությունը	Ով է հանձնում	Ում է հանձնում
I Փուլ - «Մասնակիցների ազդարարում, հավաք, խնդրադրում և իրավիճակի գնահատում»: ***Տեղությունը՝*** *- ասպողաբաշխական ժամանակով՝ 20.07.2022թ., ժամը 09:00-ից - 13:00-ն:* *- օպերատիվ ժամանակով՝ ժամը 13:00-ից մինչև հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների ավարտը,*			
Ժամը 11:30-12:30	**Միջանկյալ N 1** Գյուղի բնակիչների շրջանում տիրում է խուճապ: Քամու հետևանքով կրակը տարածվում է բնակավայրի և անտառածածկ հատվածի ուղղությամբ: Ծխապատ գոտում են հայտնվել դաշտավայրում աշխատող 8 բնակիչ:	Շտաբային ուսումնավարժության խաղարկման խումբ	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի վարչական ղեկավարին
	Միջանկյալ N 2 Հրդեհի հետևանքով վնասվել են հացահատիկի դաշտավայրերը և 6 խոշոր եղջերավոր կենդանիներ ծխահարվել են, որոնք գտնվում են դաշտավայրի հարևանությամբ գտնվող հյուրանոցային համալիրների մոտակայքում:	Շտաբային ուսումնավարժության խաղարկման խումբ	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը
II Փուլ - «Հրդեհաշիջման, բնակչության, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքերի պաշտպանության միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում և որոշումների ձևակերպում»: ***Տեղությունը՝*** *- ասպողաբաշխական ժամանակով՝ 20.07.2022թ., ժամը 13:30-ից 16:00-ն:* *- օպերատիվ ժամանակով՝ ժամը 13:00-ից մինչև աշխատանքների ավարտը:*			
Ժամը 15:00-15:40	**Միջանկյալ N 3** Անհայտ հանգամանքներում հրդեհ է բռնկվել նաև Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր գյուղից դեպի հարավ ընկած դաշտավայրերում:	Շտաբային ուսումնավարժության խաղարկման խումբ	Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ
	Միջանկյալ N 4 Քամու հետևանքով հրդեհը տարածվել է Ծաղկաձոր համայնքի Մարմարիկ գյուղից դեպի հարավ-արևմտյան կողմում գտնվող անտառածածկ հատված: Այրվում է անտառի եզրային հատվածում գտնվող թփուտները և ծառերը:	Շտաբային ուսումնավարժության խաղարկման խումբ	«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղին

	<u>Միջանկյալ N 5</u> Հրդեհի հետևանքով տարբեր աստիճանի այրվածքներ են ստացել 6 քաղաքացիներ:	Շտաբային ուսումնավարժության խաղարկման խումբ	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն